ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին ՀՀ Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է Երևան քաղաքի դեղատների աշխատողների շրջանում հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության վերաբերյալ գիտելիքների և գործնականում դրանց կիրառման գնահատման հետազոտություն: Ծրագիրն իրականացվել է Տրոպիկական հիվանդությունների գիտական հետազոտությունների և մասնագետների վերապատրաստման հատուկ ծրագրի (TDR, the Special Programme for Research and Training in Tropical Diseases) ֆինանսական աջակցությամբ, որի հովանավորներն են՝ UNICEF, UNDP, the World Bank և WHO: Հետազոտության արդյունքում պարզվել է հետևյալը.

Հարցվել է 289 աշխատող: Հարցվողների միջին տարիքը կազմել է 30.5±0.5 տարի: Հարցվողների 94%-ը եղել են իգական սեռի ներկայացուցիչները:

Ա. Ընդհանուր հարցեր.

Հարցվողների մեծամասնությունն ուներ միջին դեղագործական (45.3%) և միջին բժշկական (24.2%) կրթություն (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Հարցվողների բաշխումն ըստ կրթության.



Հարցվողների մեծամասնությունն (58%) ուներ 4-5 տարվա մասնագիտական փորձ (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Հարցվողների բաշխումն ըստ մասնագիտական փորձի.



Հարցվողների 7%-ը վերջին մասնագիտական վերապատրաստումն անցել էր 5 տարուց ավել առաջ, իսկ հարցվողների 21%-ն ընդհանրապես չունեին վերապատրաստում (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Վերջին մասնագիտական վերապատրաստումը.



Բ. Գիտելիքների գնահատման հարցերին ստացվել են հետևյալ պատասխաններ (որոշ հարցեր կարող են ունենալ մի քանի ճիշտ պատասխան).

Աղյուսակ 1.

1. Հակաբիոտիկներն ունեն նույն ազդեցությունները, ինչպիսիքն ունեն հակաբորբոքային դեղերը՝		
այո	123	42.6%
ոչ	141	48.8%
չգիտեմ	25	8.7%
2. Հակաբիոտիկներն ազդում են հետևյալ պաթոգենների վրա.		
բակտերիաներ	282	97.6%
վիրուսներ	39	13.5%
սնկեր	33	11.4%
նախակենդանիներ	25	8.7%
մակաբույծներ	10	3.5%
նշվածներից ոչ մեկի վրա	0	0.0%
դժվարանում եմ պատասխանել	6	2.1%
3. Բացի մարդուց, ու՞մ օրգանիզմում նույնպես կարող է ձևավորվել հակամանրէային կայունություն		
լաբորատոր առնետներ/կենդանիներ	200	69.2%
վայրի կենդանիներ	32	11.1%
ֆերմային կենդանիներ	105	36.3%
ձկներ, ռեպտիլիաներ, սառնարյուն կենդանիներ	29	10.0%
ոչ մեկում	0	0.0%
դժվարանում եմ պատասխանել	49	17.0%
4. Հակամանրէային դեղերի ոչ ճիշտ օգտագործման հետևանքով կարող է/են զարգանալ		
լուրջ կողմնակի ազդեցություն (էֆեկտներ)	190	65.7%
պաթոգեն մանրէների աճի կանգ	19	6.6%
հակամանրէային կայունություն	166	57.4%
բուժման արժեքի բարձրացում	23	8.0%
դժվարանում եմ պատասխանել	26	9.0%
5. Հակաբիոտիկների օգտագործումն արդյունավետ է հետևյալ դեպքերում՝		
սեզոնային գրիպ	16	5.5%
միզուղիների վարակներ	258	89.3%
մաշկային վարակներ	189	65.4%
ականջների վարակներ	193	66.8%
դժվարանում եմ պատասխանել	20	6.9%
6. Ո՞րն է հակաբիոտիկների հիմնական թերությունը, որի վերացման վրա աշխատում են հետազոտողները՝		
հակաբիոտիկները չեն ազդում վիրուսների վրա	103	35.6%
հակաբիոտիկներն ունեն կողմնակի էֆեկտներ	126	43.6%
երկարատև կիրառումը կարող է դառնալ հակամանրէային կայունության պատճառ	164	56.7%
չեն տարբերակում օգտակար և վնասակար բակտերիաները:	80	27.7%
դժվարանում եմ պատասխանել	22	7.6%
7. Ձեր կարծիքով՝ ո՞ր դեպքերում կարող է զարգանալ հակամանրէային կայունություն.		
հակաբիոտիկների ընդունման ժամանակ բժշկի նշանակումները չկատարելու դեպքում	186	64.4%

պացիենտը գնում է հակաբիոտիկներ առանց դեղատոմսի	99	34.3%
պացիենտը չի ընդունում ոչ մի հակաբիոտիկ	7	2.4%
պացիենտը գնում է նախընտրած հակաբիոտիկը	120	41.5%
դժվարանում եմ պատասխանել	17	5.9%
8. Ձեր կարծիքով՝ ո՞ր պնդումն է ճիշտ՝		
Եթե մրսածությունը տևում է 4 օրից ավել, ապա հակաբիոտիկի օգտագործումը կարող է օգնել ավելի շուտ վերադառնալ աշխատանքի	92	31.8%
Մրսածության պատճառը վիրուսներն են, հետևաբար այն հակաբիոտիկներով չի բուժվում	161	55.7%
Կարելի է խնայել գումար՝ կիրառելով նախկինում գնած հակաբիոտիկներ	1	0.3%
ազդեցության լայն սպեկտրով հակաբիոտիկներ կիրառելով կարելի է կանխել բարձր ջերությունն ու քրտնարտադրությունը	54	18.7%
դժվարանում եմ պատասխանել	22	7.6%
9. Երբ հիվանդության ախտանշանները վերանում են, հակամանրէային դեղերի ընդունումը պետք է անմիջապես դադարեցվի՝		
այո	76	26.3%
ոչ	196	67.8%
չգիտեմ	17	5.9%
10. Որքան հաճախ մարդիկ օգտագործեն հակաբիոտիկներ, այնքան դժվար կլինի հետագայում բուժել մանրէային վարակները՝		0.0%
այո	237	82.0%
ոչ	10	3.5%
չգիտեմ	42	14.5%
11. Հակաբիոտիկները		
արդյունավետ են նոր սկսվող մրսածության ժամանակ (հազ, հարբուխ)	15	5.2%
արդյունավետ են կոկորդի ցավի ժամանակ	47	16.3%
կարող են վերացնել մրսածության ախտանշանները	21	7.3%
թվարկած պատասխանները սխալ են	190	65.7%
դժվարանում եմ պատասխանել	24	8.3%
12. Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունությունը կարող է դառնալ մահվան պատճառ՝		
այո	136	47.1%
ոչ	85	29.4%
չգիտեմ	68	23.5%
13. Ո՞ր հակամանրէային դեղերի նկատմամբ է զարգանում կայունություն.		
հակաբիոտիկներ	272	94.1%
հակավիրուսային	19	6.6%
հակասնկային	22	7.6%
հակապարազիտար	9	3.1%
ոչ մեկում	1	0.3%
դժվարանում եմ պատասխանել	12	4.2%

Աղյուսակ 1-ից երևում է, որ հարցվողներն ունեն բավական գիտելիքներ հակամանրէային դեղերի վերաբերյալ միայն 34-82% դեպքերում: Հատկապես, եթե խոսքը գնում է հակաբիոտիկների մասին: Իսկ հակավիրուսային, հակասնկային և հակամակաբուծային դեղերի վերաբերյալ գիտելիքների մակարդակը չի գերազանցում 7.6%-ը: Մասնավորապես.

Հարցվողների կեսից ավելին չի տարբերակում հակամանրէային և հակաբորբոքային դեղերի ազդեցության մեխանիզմները:

13.5%–ը սխալմամբ կարծում են, թե հակաբիոտիկներն արդյունավետ են վիրուսների, 11.4%–ը՝ սնկերի, իսկ 3.5%–ը՝ մակաբույծների նկատմամբ:

30.8%–ը չգիտեն, որ հակամանրէային դեղերը կարող են կայունություն առաջացնել ոչ միայն լաբորատոր կենդանիների, այլ նաև ֆերմային կենդանիների, ձկների և այլ օրգանիզմների մոտ:

Հակամանրէային դեղերի ոչ ճիշտ օգտագործման հետևանքով հակամանրէային կայունություն զարգացման մասին տեղյակ են հարցվողների միայն 57%–ը:

5.5%–ը սխալմամբ կարծում են, թե հակաբիոտիկներն արդյունավետ են սեզոնային գրիպի ժամանակ:

Հարցվողների միայն 1/3-ն է տեղյակ հակամանրէային կայունության զարգացման բոլոր մեխանիզմներից:

Հարցվողների ¼-ը ենթադրում են, որ ախտանշանների անհայտանալուց անմիջապես հետո կարելի է դադարեցնել հակամանրէային դեղերի ընդունումը՝ մոռանալով հակամանրէային կայունության զարգացման հնարավորին հետևանքի մասին:

Հարցվողների 1/2-ը տեղյակ չեն, որ հակամանրէային կայունությունը կարող է դառնալ մահվան պատճառ:

Այն փաստի մասին որ հակաբիոտիկների նկատմամբ կարող է զարգանալ կայունություն, տեղյակ է հարցվողների 94%–ը, իսկ հակավիրուսային, հակասնկային և հակապարազիտար դեղերի նկատմամբ՝ միայն 3-7%–ը:

Գ. Վերաբերմունքի գնահատման հարցերին ստացվել են հետևյալ պատասխաններ (որոշ հարցեր կարող են ունենալ մի քանի ճիշտ պատասխան).

Աղյուսակ 2.

1. Ինչպես եք կարծում՝ հակամանրէային դեղերի ավելորդ կիրառումը լու՞րջ խնդիր է Հայաստանի համար՝		
այո	219	75.8%
ոչ	12	4.2%
չգիտեմ	58	20.1%
2. Արդյոք ինքներդ նախընտրում եք օգտագործել հակաբիոտիկներ, երբ ունեք.		
կոկորդի ցավ	47	16.3%
հազ	33	11.4%
հարբուխ	7	2.4%

նոր սկսվող մրսածություն	9	3.1%
ջերմություն	38	13.1%
լուծ	22	7.6%
նախընտրում եմ չօգտագործել	197	68.2%
դժվարանում եմ պատասխանել	12	4.2%
3. Ձեր կարծիքով, արդյո՞ք հակամանրէային դեղերն անհրաժեշտ է վաճառել միայն դեղատոմսով՝		
այո	106	36.7%
ոչ բոլորը	151	52.2%
ընդհանրապես ոչ	8	2.8%
դժվարանում եմ պատասխանել	24	8.3%
4. Ձեր կարծիքով, հակամանրէային դեղերի որ տեսակները պետք է վաճառվեն միայն դեղատոմսով ՝		
հակաբիոտիկներ	228	78.9%
հակավիրուսային	37	12.8%
հակասնկային	60	20.8%
հակամակաբուծային	35	12.1%
բոլոր տեսակներն էլ պետք է վաճառվեն միայն դեղատոմսով	7	2.4%
դժվարանում եմ պատասխանել	45	15.6%
5. Ձեր կարծիքով, հակամանրէային դեղերի որ դեղաձևերը պետք է վաճառվեն միայն դեղատոմսով ՝		
ներարկման համար (սրվակներ)	240	83.0%
ներքին ընդունման (հաբեր և օշարակներ («сироп»))	119	41.2%
արտաքին օգտագործման (քսուկներ և կրեմներ)	1	0.3%
սփրեյներ	26	9.0%
աչքի, ականջի կաթիլներ	80	27.7%
այլ դեղաձևեր՝ _____	7	2.4%
դժվարանում եմ պատասխանել	42	14.5%
6. Արդյոք կարծում եք թե գիտեք, թե երբ պետք է կիրառել հակամանրէային դեղերը.		
միանշանակ այո	10	3.5%
հավանաբար այո	17	5.9%
դժվարանում եմ պատասխանել	36	12.5%
հավանաբար ոչ	158	54.7%
միանշանակ ոչ	68	23.5%
7. Դուք ինքներդ մինչև վերջ ընդունում եք հակաբիոտիկի ամբողջ նշանակված կուրսը, եթե անգամ արդեն ավելի լավ եք Ձեզ զգում		
միշտ	7	2.4%
մեծամասամբ	85	29.4%
հաճախ	20	6.9%
դժվարանում եմ պատասխանել	5	1.7%
երբեմն	19	6.6%
երբեք	153	52.9%
8. Նախընտրու՞մ եք արդյոք տանը միշտ ունենալ հակամանրէային դեղեր, մտածելով, որ դրանք կարող է մեկ օր պետք գան		
միանշանակ այո	118	40.8%
հավանաբար այո	92	31.8%
դժվարանում եմ պատասխանել	5	1.7%
հավանաբար ոչ	57	19.7%
միանշանակ ոչ	17	5.9%
9. Արդյոք ինքներդ կնախընտրեիք գնել հակամանրէային դեղեր առանց դեղատոմսի		

միանշանակ այո	62	21.5%
հավանաբար այո	77	26.6%
դժվարանում եմ պատասխանել	19	6.6%
հավանաբար ոչ	121	41.9%
միանշանակ ոչ	10	3.5%
10. Ձեր կարծիքով հակամանրէային դեղերը պետք է նշանակվեն՝		
միայն բժշկի կողմից	163	56.4%
դեղագետն իրավունք ունի խորհուրդ տալու հակաբիոտիկ որոշ բացահայտ դեպքերում	74	25.6%
բժիշկն ու դեղագետը հավասարազոր են խորհուրդ տալու հակաբիոտիկներ	49	17.0%
դժվարանում եմ պատասխանել	3	1.0%

Աղյուսակ 2-ից երևում է, որ հարցվողները քիչ դեպքերում են դրսևորում ճիշտ վերաբերմունք հակամանրէային դեղերի վերաբերյալ, հատկապես՝ հակավիրուսային և հակասնկային միջոցների: Մասնավորապես.

Հարցվողների գրեթե ¼-ը կարծում է, թե հակամանրէային դեղերի ավելորդ կիրառումը Հայաստանում լուրջ խնդիր չի հանդիսանում:

Հարցվողների միայն 37%-ն է համարում, որ հակամանրէային դեղերը պետք է վաճառվեն միայն դեղատոմսով: Ընդ որում հիմնականում դա վերաբերում է հակաբիոտիկներին, այն ինչ հակավիրուսային, հակասնկային և հակամակաբուծային դեղերի դեղատոմսային վաճառքի կողմնակից է հարցվողների միայն 12-20%–ը: Միաժամանակ հարցվողների միայն 80%–ն են հակամանրէային դեղերի սրվակային դեղաձևերի դեղատոմսային վաճառքին, այն ինչ ներքին ընդունման (հաբեր և օշարակներ («сироп»)) դեղաձևերի դեպքում՝ միայն 41%-ը, աչքի և ականջի կաթիլների դեպքում՝ 28%–ը, իսկ սփրեյերի դեպքում՝ միայն 9%-ը:

Հարկ է նաև նշել, որ հարցվողների 48%-ն ինքները կնախընտրեին գնել հակամանրէային դեղերն առանց դեղատոմսի:

Հարցվողների միայն 32%-ն է մինչև վերջ ավարտում հակաբիոտիկի նշանակված կուրսը:

Հարցվողների 73%-ը նախընտրում են տանը միշտ ունենալ հակամանրէային դեղերի պաշար:

Ցավոք՝ հարցվողների միայն 56%-ն է գիտակցում, որ հակամանրէային դեղերը պետք է նշանակվեն միայն բժշկի կողմից:

Դ. Պրակտիկայի գնահատման հարցերին ստացվել են հետևյալ պատասխաններ.

Աղյուսակ 3.

1. Պատկերացրեք, որ հաճախորդը եկել է Ձեր դեղատուն և խնդրում է ընդամենը 3 դեղահատ ամոքսիկլավ: Ինչպե՞ս եք վարվում.		
պատահում է, որ ես վաճառում եմ, խորհուրդ տալով, թե ինչպես օգտագործել հակաբիոտիկները	188	65.1%
պատահում է, որ ես չեմ տալիս, զգուշացնելով հետևանքների մասին	48	16.6%
այդպես չի լինում, սակայն ես խորհուրդ կտայի, թե ինչպես օգտագործել հակաբիոտիկները	38	13.1%
այդպես չի լինում, սակայն ես ոչինչ չէի ասի հետևանքների մասին	0	0.0%
դժվարանում եմ պատասխանել	15	5.2%
2. Պացիենտը եկել է Ձեր դեղատուն, որպեսզի վերադարձնի վերջին բուժումից հետո մնացած հակաբիոտիկի դեղահատերը՝		
Պատահել է, բայց ես հետ չեմ ընդունել	127	43.9%
Պատահել է և ես դրանք հետ եմ ընդունել	14	4.8%
Պատահել է և ես դրանք հետ եմ ընդունել՝ միայն եթե գնվել են մեր դեղատանը	19	6.6%
Չի եղել, իսկ լինելու դեպքում ես հետ չէի ընդունի	114	39.4%
Չի եղել, իսկ լինելու դեպքում ես հետ կընդունեի	2	0.7%
Չի եղել, իսկ լինելու դեպքում ես հետ կընդունեի՝ միայն եթե գնվել են մեր դեղատանը	5	1.7%
դժվարանում եմ պատասխանել	8	2.8%
3. Արդյո՞ք հաճախորդին խորհուրդ կտաք հակաբիոտիկ՝ անհայտ (վիրուսային թե բակտերիալ) սուր շնչառական վարակի դեպքում, եթե նա նշի, որ.		
1) նախորդ անգամ նույն ախտանշանների առկայության ժամանակ նրա վիճակը լավացել է հակաբիոտիկները նշանակումից հետո՝		
միանշանակ այո	154	53.3%
հավանաբար այո	86	29.8%
դժվարանում եմ պատասխանել	15	5.2%
հավանաբար ոչ	28	9.7%
միանշանակ ոչ	6	2.1%
2) մրսածության նշաններն արդեն 3-4 օրից ավել են՝		
միանշանակ այո	99	34.3%
հավանաբար այո	120	41.5%
դժվարանում եմ պատասխանել	22	7.6%
հավանաբար ոչ	37	12.8%
միանշանակ ոչ	11	3.8%
3) հազ՝ դեղին կամ կանաչ խորխով՝		
միանշանակ այո	75	26.0%
հավանաբար այո	103	35.6%
դժվարանում եմ պատասխանել	23	8.0%
հավանաբար ոչ	70	24.2%
միանշանակ ոչ	18	6.2%
4) թարախային արտադրություն քթից՝		
միանշանակ այո	71	24.6%
հավանաբար այո	95	32.9%
դժվարանում եմ պատասխանել	20	6.9%
հավանաբար ոչ	77	26.6%
միանշանակ ոչ	26	9.0%

4. Արդյո՞ք հաճախորդին խորհուրդ կտաք հակաբիոտիկ՝ անհայտ (վիրուսային թե բակտերիալ) աղիքային վարակի դեպքում, եթե նա նշի, որ.		
1) նախորդ անգամ նույն ախտանշանների առկայության ժամանակ նրա վիճակը լավացել է հակաբիոտիկների նշանակումից հետո՝		
միանշանակ այո	147	50.9%
հավանաբար այո	99	34.3%
դժվարանում եմ պատասխանել	10	3.5%
հավանաբար ոչ	29	10.0%
միանշանակ ոչ	4	1.4%
2) առկա են փորի սպաստիկ ցավեր՝		
միանշանակ այո	162	56.1%
հավանաբար այո	89	30.8%
դժվարանում եմ պատասխանել	12	4.2%
հավանաբար ոչ	26	9.0%
միանշանակ ոչ	0	0.0%
3) կղանքում առկա են արյան հետքեր՝		
միանշանակ այո	145	50.2%
հավանաբար այո	94	32.5%
դժվարանում եմ պատասխանել	19	6.6%
հավանաբար ոչ	24	8.3%
միանշանակ ոչ	7	2.4%
4) առկա է բարձր ջերմություն՝		
միանշանակ այո	92	31.8%
հավանաբար այո	97	33.6%
դժվարանում եմ պատասխանել	20	6.9%
հավանաբար ոչ	61	21.1%
միանշանակ ոչ	19	6.6%
5) լուծը տևում է 3-4 օրից ավել՝		
միանշանակ այո	98	33.9%
հավանաբար այո	97	33.6%
դժվարանում եմ պատասխանել	21	7.3%
հավանաբար ոչ	55	19.0%
միանշանակ ոչ	18	6.2%
5. Արդյոք հաճախորդից պահանջում եք դեղատոմս հակամանրէային դեղերի համար՝		
միշտ	48	16.6%
հաճախ	123	42.6%
դժվարանում եմ պատասխանել	10	3.5%
երբեմն	80	27.7%
երբեք	28	9.7%
6. Որքա՞ն հաճախ եք խորհուրդ տալիս հակաբիոտիկներ.		
1) սուր շնչառական վիրուսային հիվանդության ժամանակ.		
միշտ	179	61.9%
հաճախ	80	27.7%
դժվարանում եմ պատասխանել	16	5.5%
երբեմն	12	4.2%
երբեք	2	0.7%
2) սուր բրոնխիտի ժամանակ.		

միշտ	138	47.8%
հաճախ	91	31.5%
դժվարանում եմ պատասխանել	21	7.3%
երբեմն	33	11.4%
երբեք	6	2.1%
3) 3 օրից ավել հազի դեպքում.		
միշտ	166	57.4%
հաճախ	81	28.0%
դժվարանում եմ պատասխանել	14	4.8%
երբեմն	25	8.7%
երբեք	3	1.0%
4) 7 օրից ավել հազի դեպքում.		
միշտ	141	48.8%
հաճախ	83	28.7%
դժվարանում եմ պատասխանել	18	6.2%
երբեմն	27	9.3%
երբեք	20	6.9%
5) անհայտ ծագման բաձր ջերմության դեպքում.		
միշտ	148	51.2%
հաճախ	74	25.6%
դժվարանում եմ պատասխանել	23	8.0%
երբեմն	22	7.6%
երբեք	22	7.6%
7. Արդյո՞ք միշտ ուղորդում եք հիվանդներին, թե ինչպես պատշաճ կիրառել հակամանրէային դեղերը.		
միշտ	11	3.8%
հաճախ	104	36.0%
դժվարանում եմ պատասխանել	2	0.7%
երբեմն	81	28.0%
երբեք	91	31.5%
8. Արդյոք միշտ զգուշացնում եք հակամանրէային դեղերի ոչ պատշաճ կիրառման հետևանքների մասին՝		
միշտ	9	3.1%
հաճախ	118	40.8%
դժվարանում եմ պատասխանել	3	1.0%
երբեմն	78	27.0%
երբեք	81	28.0%
9. Արդյո՞ք խորհուրդ եք տալիս հակասնկային դեղեր հակաբիոտիկների կիրառման ժամանակ՝		
միշտ	26	9.0%
հաճախ	164	56.7%
դժվարանում եմ պատասխանել	8	2.8%
երբեմն	63	21.8%
երբեք	28	9.7%

Աղյուսակ 3-ից երևում է, որ գիտելիքները պրակտիկայիում ճիշտ են կիրառվում միայն 4.9-59.2% դեպքերում: Մասնավորապես.

Հակաբիոտիկի ոչ լիարժեշ կուրս գնելու դեպքում դեղատան աշխատակիցների 18%–ը որևէ խորհուրդ կամ նախազգուշացում հետևանքների մասին չեն տալիս: Ընդհանրապես, հակամանրէային դեղերի ճիտ կիրառման վերաբերյալ հաճախորդներին իրազեկում են հարցվողների միայն 40%–ը, իսկ ոչ պատշաճ հետևանքների մասին՝ միայն 44%-ը:

Բուժման կուրսից հետո մնացած հակամանրէային դեղերի հետ ընդունումը չեն բացառել հարցվողների 14%–ը:

Տարբեր սիմպտոմատիկայի նկարագրության դեպքում հարցվողների 65-87%–ը խորհուրդ կտային հակամանրէային դեղեր, այն ինչ ավելի ճիշտ կլիներ ուղղորդել բժշկին:

Ցավալի է, սակայն սուր շնչառական վիրուսային հիվանդության ժամանակ հարցվողների 90%–ը խորհուրդ են տալիս հակաբիոտիկներ:

Հակաբիոտիկների կիրառմնան ժամանակ հակասնկային դեղերի անհիմն խորհուրդ է տալիս հարցվողների 66%–ը:

Ե. Լրացուցիչ հարցերին ստացվել են հետևյալ պատասխաններ.

Աղյուսակ 4.

1. Արդյոք ստանում եք ժամանակակից տեղեկատվություն հակամանրէային դեղերի վերաբերյալ (ցուցումներ, դոզաներ, հիվանդների նախընտրությունները)՝		
այո	279	96.5%
ոչ	4	1.4%
դժվարանում եմ պատասխանել	6	2.1%
2. Եթե այո, ապա որտեղի՞ց եք ստանում ժամանակակից տեղեկատվություն հակամանրէային դեղերի վերաբերյալ.		
կլինիկական պրոտոկոլներ (ուղեցույցներ)	71	24.6%
դասագրքեր	72	24.9%
դեղագործական տեղեկատուներ («справочник»)	148	51.2%
համացանց (ինտերնետ)	193	66.8%
դեղագործական ընկերությունների ուսումնական նյութեր	155	53.6%
գործընկերների խորհուրդներ	62	21.5%
դժվարանում եմ պատասխանել	1	0.3%

Աղյուսակ 4-ից երևում է, որ հարցվողների մեծամասնությունը ստանում է ժամանակակից տեղեկատվություն հակամանրէային դեղերի վերաբերյալ: Ընդ որում, հաճախակի օգտագործվող աղբյուրներն են՝ համացանցը, դեղագործական ընկերությունների ուսումնական նյութերն ու դեղագործական տեղեկատուները: Միաժամանակ կլինիկական ուղեցույցերին և դասագրքերին դիմում է հարցվողների միայն քարորդ մասը:

Եզրակացություն.

Վերլուծության արդյունքները ցուցադրեցին գիտելիքների, վերաբերմունքի և պրակտիկայում դրանց կիրառման ընդամենը միջին արդյունք: Մատնանշական է, որ հատկապես ցածր արդյունքներ են դիտվում հակավիրուսային և հակասնկային դեղերի պարագայում:

Հաշվի առնելով վերը նշվածը, անհրաժեշտ է.

- Մշակել ուսումնական դասընթացներ դեղատների աշխատակիցների համար, նվիրված հակամանրէային կայունության զարգացման պատճառներին և դրա կանխարգելմանը,
- Ուսսումնական հաստատությունների դասավանդող անձնակազմի ուշադրությունը դարձնել հակամանրէային տարբեր խմբերի, հատկապես՝ հակավիրուսային և հակասնկային դեղերի վրա,
- Վերապատրաստման դասընթացների ժամանակ ավելի շատ ժամանակ հատկացնել հակավիրուսային և հակասնկային դեղերի ցուցումներին,
- Հատուկ ուշադրություն դարձնել հակամանևէային դեղերի բոլոր խմբերի նկատմամբ կայունության զարգացման պատճառների և դրա կանխմանն ուղղված միջոցառումների վրա,
- Ամենուրեք բացատրել, որ հակամանրէային դեղերը՝ անկախ հանգամանքներից, պետք է նշանակվեն միայն բժշկի կողմից,
- Ուժեղացնել հսկողությունը վերահսկող կառույցների կողմից հակամանրէային դեղերի բաց թողնման կանոնների ապահովման ուղղությամբ: